


10053

Gm 58 Kyph



24 SEP 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՄԻ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բուլոր յերկրների, միացե՛ք.

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 18

09 DEC 2009


ԳՈՒՄԵԴԻՆ

3 KCM1

4-96

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԽՈՐԺՅՈՒՆ  
ԼԵՆԻՆՑԱՆ ՈՒՂԻՈՎ

(1934 գյուղքիչների քաղբնշերցան առաջին նյութ)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 196.

Յերեվան — 1925.

10053

[27 MAR 2013]

ԱՐԱԶԱՐԱՆԻ ՏԵՂ

Եսոր մեր գլուզը ջնինքը իրենց ունեցած պատրաստությամբ զեռ շատ հնատ են, շատ ու շատ ցածր առտիճանի վրա յէ գանձվում նրանց քաղաքական մակարդակի:

Եղ և պատճառը անա, վոր հիմի մենք քաղզրագիտական աշխատանքը գյուղում, մեր միության կարևոր խնդիրներից մեկն ենք համարում:

ինչու ետենց գանգաղ են առաջապիմում մեր զյուղ-  
բջիջները։ Հատ պարզ է։ Դյուլում մենք քաղցրագիտա-  
կան աշխատանքներ տանելիս դժվարությունների յենք  
հանդիպում, փորոշետև մենք այսուեղ չունենք այդ աշ-  
խատանքների համար անհրաժեշտ քանակությամբ զեկա-  
փարներ։ Մի խոսքով զյուղում շատ քիչ են և համարյա-  
թե չկան ննպիսի ընկերներ, փորոնք կարողանային քաղ-  
ցրագիտական աշխատանք տանել։

Ույժերի այդ պակասությունն և պատճառը, զոր մենք շրջանային կենդրաններում և տմենախոշոր գյուղերում ենք միայն քաղցրավիտության միասնական սիստեմ մացրել:

Բայց ինչ ել լինի, թե կուզ զանգաղ քայլերով, բայց և և և և մեր բոլոր պյուզը ջներում պետք է կատարենք քաղցրագիտության ծրագրիմած աշխատանքներ:

Իսկ այժմ մնենք պետք և մեր հույսը զնենք հենց զյուղը ջնների վրա, նրանց ուժերի վրա և նրանց միջոցով կազմակերպենք մեր քաղգրագիտություն տարածելու աշխատանքները:

Կենտկոմի ազիտ բաժինը մի լավ քաղցրապիտական պարագաների ձև և սահմանել. եզ քաղցրնթերցումն եւ Մեր զյուղքիջներում զոյսլի յուն ունի մի ակտիվ տարր, փորը զբագետ ե, կարողանում է կարգալ, իր կարգացածը հասկանալ և ուրիշներին բացատրել. Ահա եղախի ընկերների միջոցով մենք ես ձևովա ընթացքում, ծրագրված քաղցրնթերցումներ պիտի կաղմակերպենք:



24210-59

## Պետհրատի յերկըորդ տպարան Յերևանում

*Shipwreck* 4,000

Նամար համար լավ կյանք ստեղծելու մասին եր միշտ մտածում Բայց չնայած վոր Լենինը մեռավ, կոմունիստական կուսակցությունը այսպես և աշխատում ինչպես սովորեցրել ե Լենինը:

Կոմունիստական կուսակցությունը, հետեւյով Լենինին, նեպին և ուզում անի վոր մեր բանվորների և չքավոր գյուղացիների կյանքը լավանա: Բանվորի և գյուղացու գրությունը կլավանա են ժամանակ, յերբ բանվորն ու գյուղացին ձեռք ձեռքի տված միասին կաշխատեն և ամուր կպահեն իրենց խորհրդային իշխանությունը: Դրա համար հարկավոր ե վոր քաղաքի և գյուղի, բանվորների և գյուղացիների կազը ամուր լինի, վոր նրանք իրար դարդեր հասկանան և աշխատեն հաստատ պահել խորհրդային իշխանությունը:

Լենինը ասել ե, վոր հայ, թուրք, վրացի, ոռւս, գերմանացի և ուրիշ ազգերի բանվորներն ու գյուղացիները իրար հետ չպիտի կռվեն, իզուր տեղիրար արին թափեն:

Իրար հետ դրանք կռիվ չպիտի անեն, խաղաղ պիտի ապրեն վորովնետե բոլոր ազգերի գյուղացիների և բանվորների դարդերը մեկ են, բոլորին ել տաճաջում, կողոպտում են բուրժուաները:

Բոլոր ազգերի բանվորներն ու գյուղացիները մի թշնամի ունեն՝ դա բուրժուազիան ե: Ուրիշ թշնամի չկա: Վորապեսզի ամբողջ աշխարհի չքավորներն ազտովեն բուրժուաների լծից նրանք պիտի տապալեն իրենց շահագործող բուրժուաներին և իրենց իշխանությունը հաստատեն: Դրա համար բոլոր յերկերների բանվորներն ու գյուղացիները պիտի միացած լի-

նեն: Ավ չի իմանում են առակը, թե «զեղը վոր կաղնի—գերան կը կռարի», թե չե ցախավիլի ճիպոտները մեկ մեկ մեր գեղի թաթոսն ել կը կռարատի. Համա ամբողջ ցախավիլը իսկի գեղի ամենառաժեղ համփան չի կարա կռարի»:

Բուրժուաները ես առակը մեղնից լավ գիտեն: Դըրա համար ել նրանք կռացնում են հայ, թուրք, վըրացի, գերմանացի, և ուրիշ ազգերի բանվորներին ու գյուղացիներին, վորապեսզի իրենք միջանեղը հանգիստ իրենց համար ապրեն, աշխատավոր գյուղացու և բանվորի քրախնքով աշխատածը լափեն:

Բուրժուաների եղ ժուլիկությունը մենք լավ ենք հասկանում: Դրա համար ել կոմունիստական կուսակցությունը և նրա մեծ առաջնորդ Լենինը, միշտ ասելիս և յեզել վոր տարբեր ազգերի բանվորներն ու գյուղացիները իրար հետ քենամուրյուն չւենեն, նրանք իրար հետ չպիտի կռվեն այլ միացած պիտի դուրս գան իրենց յերկերների բուրժուաների գեմ, գրանց հաղթեն և ազատ ու լավ կյանքով ապրեն:

Կոմյերիտական ամրացրու մեր կարմիր բանակը

Զոր ու ցամաք ձեռքերով բանվորն ու գյուղացին ևս չեն կարա իրենց իշխանությունը ամուր պահեն: Բուրժուաները ամեն մի սհաթ կարող են հարձակվել մեր իշխանության վրա, վորապեսզի շարունակեն իրենց հին արարքները: Դրա համար ել՝ բանվորներին և գյուղացիներին հարկավոր ե իրենց շահերը պաշտպանող բանվորա-գյուղացիական կարմիր բանակ ունենալ: Կարմիր բանակում ծառայում են միմիայն շահել

բանվորներն ու գյուղացիները, վորովհետեւ նրանք լավ են հասկանում իրենց գեղերի ու մեր յերկրի շահերը և իրենց կարմիր զենքերով լավ կը պաշտպանեն բանվորի և գյուղացու խաղաղ ու հալալ աշխատանքը:

Խորհրդային լշխանությունը հալա մենակ մեր յերկրում և հասատաված: Մեր յերկրը շրջապատված է բուրժուական իշխանություններով վորոնք ատամները զիլի պես սրած՝ վոր թողնաս ամեն մի սհաթ մեր գյուղացու աշխատանքի վրա կը նկանեն ու կը հափշտակեն: Հենց եղ բուրժուակաների ատամները ջարդելու համար և, վոր մենք պիտի կարմիր բանակ պահենք: Եսա չորս տարի և վոր, կարմիր բանակի պաշտպանության տակ, մեր յերկրի բանվորն ու գյուղացին շինարար աշխատանքով են պրազված: Դըրա համար ել լենինը մեզ ասել ե, վոր ամեն մի բանվոր ու գյուղացի իրենց աչքի լուսի նման պիտի պահեն մեր կարմիր բանակը, սիրեն, ուժ տան նրան:

## Համախմբվենք Կոմունիստական Կուսակցության ըուրցը

Վայ գյուղացուն հարցնես, վոր չասի, թե ես չորս տարի վոր ինքը ականջը կախ սուս ու փուս հանգիստ աշխատում ե, զբանով նա պարտական և կոմունիստական կուսակցությանը: Լենինը, են մարդը, վորին ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները սիրում և լսում եյին 25 տարվա ընթացքում կազմակերպել և կուլ և կոմունիստական կուսակցությունը: Լենինը 25 տարի իր հիմնած կոմունիստական կուսակցության հետ միասին, կովելիս և յեղել թագավորի

դեմ, եսերների, մենչեկիների դեմ, ազգայնականների, որինակ զաշնակցականների դեմ, բանվորների և գյուղացիների գործի, նրանց շահերի համար: Լենինը կմաչկա, բայց նա թողել և կոմունիստական կուսակցությունը, վորը լենինի սկսած մեծ գործը կշարունակի:

Մեր զեղացի ընկերները պիտի լավ հասկանան, թե կոմունիստական կուսակցությունն և, վոր աշխատում և բանվորների ու գյուղացիների համար և նա յե միայն նրա շահերի պաշտպանը: Հիմի յերբ լենինը չկա, բոլորը պիտի համախմբվեն կոմունիստական կուսակցության շուրջը, նրան թե ու թիկունք դառնան, վորպեսզի կոմունիստական կուսակցությունը իրա աշխատանքները հաջող առաջ տանի և բանվորների ու գյուղացիների զրությունը լավացնի:

Պիտի շատ լավ իմանանք, վոր գյուղացուն լավ որին հասցնողը մենակ կոմունիստական կուսակցությունն և և գրա համար պիտի նրան ուժ տաք, նրա հետ առաջ գնաք, վորպեսզի նա միշտ ենպես հաղթի բանվորների ու գյուղացիների թշնամիներին, ինչպես հաղթել և մինչեւ հիմա:

Լենինյան կոմունիստական Յերիտասարդական Միությունը կոմկուսի անսպառ պահեստն և, նոր կյանք կառուցող կազմակերպությունը:

Համա բանվորի և գյուղացու բուրժուաների գեմ մզած կոփիք շատ և քաշելու. ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները կովի ճանապարհով պիտի հաղթեն իրենց յերկրի թշնամիներին և իրենց խորհրդային իշխանությունը հաստատեն: Մեր յերկրում հարկավոր և շինարարական աշխատանք կատարել հարկավոր և զաշնակցականների ձեռքով քանդած ու

ավերված Հոյատառանը վերաշինել, ծագկացնել: Դրա համար հարկավոր են միշտ նորանոր յերիտասարդ հեղափոխական մարդիկ:

Մեր գնալու ճամբեն յերկար ե, եղ ճանապարհին բեզմառողներ կը նեն: Հարկավոր ե, վոր գրանց տեղը նորանոր մարդիկ բռնեն և հեղափոխական գործը առաջ տանեն: Դրա համար ե, վոր գյուղերում ու քաղաքներում լավագույն և հեղափոխական յերիտասարդներից կոմմոնոլիկ թիջներ ե կազմակերպվում:

Կոմմոնոլիք կուսակցության թիւ ու թիկունքն ե նրա անսպառ պահեստի բանակը:

Մեր կոփվը բուրժուաների գեմ, աշխարհը կոմունիտական դարձնելու համար, յերկար ե լինելու: Յերկար ե լինելու, վորովհետև հարուստաները չեն համաձայնվի հեշտ կերպով հրաժարվել իրենց քաղցր և յերտնելի կյանքից: Բանվորները և չքավոր գյուղացիները, վորոնք կոմ. կուսակցության հետ միասին կովում են, զիտեն, վոր փոխարինող պիտի՝ լինի իրենց այդ կըռվին, զիտեն, վոր հարկավոր ե կազմակերպել յերիտասարդությունը, վորը հնարավորություն կունենա այդ կոփվը լավ շարունակելու և վերջացնելու, մեր յերկիրը լուսավորելու:

Յերիտասարդության գրությունը բուրժուազիայի իշխանության ժամանակ շատ վատ եր, նրան ամեն կերպ շահագործելիս են յեղել, իրենք հարստոցել նըրանց քրտինքով: Վորպեսզի յերիտասարդությունը ազատվեր շահագործումից և հաջող կովեր բուրժուաների գեմ, նա պիտի կազմակերպեր, հիմներ իր միությունները:

Յերկոպայում յերիտասարդական միությունները

շատ վաղուց են կազմակերպվել: Բելգիայում 1891 թ. կազմակերպվում է «սոցիալիստական յերիտասարդական գվարդիա», իսկ Ավստրիայում 1894 թվին բանվոր յերիտասարդները կազմակերպել են «յերիտասարդ բանվորների ընկերություն», վորը ցանկանում եր պաշտպանել յերիտասարդ բանվորների տնտեսական շահերը: Այդպիսի կազմակերպություններ, միություններ ստեղծվում են նույնպես և Գերմանիայում, Զգիցերիտայում, Խանխայում և ուրիշ յերկրներում: Այդ բարյար կազմակերպությունների ամենահիմնական անելիքը, ոտ յերիտասարդների դրությունը լավացնելու և մասամբ նրանց կրթական գործը լավ հողի մըադնելու խնդիրն եր:

Բուրժուական յերկրների յերիտասարդական միությունները կամաց-կամաց միանում են (միջազգային մասշտաբով) իրենց աշխատանքները ուժեղացնելու համար: Առաջին անգամ այդ կազմակերպությունները միացան Շտուտգարդ քաղաքում, 1907 թ., ուր առաջին անգամ կազմվեց Յերիտասարդական Խնաերնացիոնալ:

Յերիտ. Միությունները վերջին իմպերիալիստական կովի (1914 թ.) ժամանակ արդեն սկսում են կոմունիստական աշխատանք տանել և պայքարել պատերազմի գեմ: Նրանք 1919 թվին ներլինում կազմեցին կոմյերիս Խնաերնացիոնալ:

Ռուսաստանում Յերիտմիությունները առաջին անգամ կազմակերպվեցին 1917 թվին, վետրվարյան հեղափոխության որերին: Ռուսաստանում յերիտասարդությունը ուշ կազմակերպվեց, վորովհետև ցարի (թագավորի) իշխանության պայմանները խեղդում, թույլ

չեյին տալիս յերիտասարդությանը կազմակերպվել և աշխատել:

1918 թվի հոկտեմբերին կայանում և յերիտմիությունների առաջին Համառուսական համագումարը, վորք վորոշում և միությանը տալ Կոմյերիտմիություններնը:

Կոմյերիտմիությունը քաղաքացիական կոփքսերի ժամանակ կարմիր բանակին թև ու թիկունք և ծառայում և իրեն լավ անդամներին ուղարկում և ճակատ բուրժուազիյն հաղթելու համար:

Քաղաքացիական կոփքսերը վերջանալուց հետո, Կոմյերիտմիությունը լծվում և շինարարական և լուսավորական աշխատանքների:

1924 թվին Մոսկվայում կայացավ Կոմյերիտմիության համամիութենական ՎԻ-րդ համագումարը, վորք մեր միությունը վերանվանեց Լենինյան Կոմիերիտմիություն. Այդ ժամանակ Միության մեջ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութունների Միության մասշտաբով կային 740,000 անդամ:

ՎԻ-րդ համագումարը մեր Միությանը տարով Լենինյան կոչումը, վորոշել և, վոր մեր կոմսոմոլիստները պիտի դաստիարակվեն Լենինի վոգով, վորպեսզի հաջող կերպով շարունակեն և վերջացնեն բանվորների և գյուղացիների վերջնական ազատագրման դորձը ամբողջ աշխարհում:

### Կոմիերիտմիությունը մեզ մոտ

Ինչպես Հայաստանում, այնպես ել մեր հարևան յերկրներում՝ Վրաստանում և Աղրբնջանում, աշխատառում են կոմսոմոլի կազմակերպությունները: Հայաս-

տանի կոմյերիտմիությունը կազմակերպվել է 1920 թ. 29-ին նոյեմբերից հետո, յերբ Հայաստանում հաստատվեց բանվարների և գյուղացիների իշխանությունը:

1920 թվից մինչև մեր որերը Հայաստանի կոմսոմոլլ ձեռք ձեռքի տված Կոմկուսակցության հետ աշխատել և զաստիարակել և քաղաքականապես դարգացնել Հայաստանի աշխատավոր յերիտասարդությանը: Հայաստանի Լենինյան Կոմյերիտմիություններն շարքերում այժմս ունի 13,700 յերիտասարդ գյուղացի և բանվոր:

Կոմյերիտմիությունը մեր յերկրի աշխատավոր յերիտասարդության ամենաակտիվ գործի ընդունակ և նրա ամենաազիտակից ու զեկավարող կազմակերպությունն է:

Այժմս Հայաստանի Լենինյան լուրջ կերպով լծվել ե այն աշխատանքներին, վորը սկսել և խորհրդացին իշխանությունը: Զետ աշխատանքի մի ասպարեզ, ուր Լենինյանելիք չունենա: Կարմիր բանակից սկսած մինչև վյուղիսովկոմը նա իրեն անդամների միջնորդ վերացնում և մեր յերկիրը: Միաժամանակ նա սովորելով կառուցում և չեկ կառուցելով սովորում:

Լենինը վոր իրեն նպատակ եր դրել՝ բանվորին ու գյուղացուն կոմունիզմին հասցնել, մեծ ուշագրություն եր գործնում յերիտասարդության վրա և առաջին ներթին նրա զեկավար՝ կոմսոմոլի վրա:

Նա լավ գիտեր, վոր կոմսոմոլը. մեր Կոմսունիստական կուսակցության ապագան և հույսը, վոր հարկավոր և կոմսոմոլում այնպես աշխատել, վոր լավ կոմունիստ աղաներ գուրս գան և բանվոր ու գյուղացու գործի համար աշխատեն: Լենինը մի մարդ եր, վո-

ըր բանվորի ու գյուղացու մենակ եսորվա մասին չեր  
մտածել այլև նրա ապագայի համար: Նա շատ բան  
է սովորացրել յերիտասարդներին: Եղ սովորացրած ճաշ  
նապարհներով պիտի առաջ գնան մեր յերկրի յերի-  
տասարդները, վորպեսզի կարողանան կոմսոմոլիստի մեծ  
կոչումը առանց ամոթանքի կրեն: Կոմսոմոլիստը նու  
չի, ով միայն կոմսոմոլի տոմսակ ունի ջերումը, կամ  
կոմսոմոլիստը նա ե, ով իրեն ամեն որվա աշխատանք-  
ներով ենպես ե անում, ինչպես լենին ե ասել:

Ինչ ե սովորեցրել ինչ ավանդներ ե թողել լե-  
նինը յերիտասարդներին, կը հարցնի գյուղի ամեն մի  
կոմսոմոլիստ:

### Կոմսոմոլի ամենագլխավոր անելիքը սովորելի ե

Մեր գյուղերի կոմսոմոլիստները միշտ ել առում  
են, վոր իրենք ավելի լավ կյանքով պիտի ապրեն քան  
թե իրենց պատերն ու հայրերը: Դատարկ խոռքերով  
գյուղի թաթոսներն են ապրում: Կոմսոմոլիստը, վոր  
գյեղում նոր կյանք պիտի ստեղծի, մենակ դատարկ  
խոռքերով չի կարա ապրել: Նա իրեն աշխատանքով  
ու գործով ցույց պիտի տա, վոր նա կարող ե այդ առ-  
նել գյուղում: Նոր, լավ կյանք ստեղծելը, դժվար բան  
ե: Եղ գործը կատարելու համար հարկավոր ե դիտուն,  
լուսավոր մարդ դառնալ, հարկավոր ե միշտ սովորել  
և ուրիշներին սովորացնել: Մեր շատ կոմսոմոլիստանե-  
րը, հեջ բան չը հասկանալով, շատ խոսում են ու գյու-  
ղացիների գլուխը ցավացնում: Հո մենք պիտենք թե  
ինչ ե գյուղի պառավը: Մինչեւ նրան մի բան հաս-  
կացնես, քարը մարդ կը ծնի: Հարկավոր ե, վոր մեր

գյուղի յերիտասարդները քիչ խոսեն ու շատ գործ կա-  
տարեն: Շատ սովորեն ու դրանով ցույց տան, վոր  
խոռքերից բացի, աշխատում են և սովորում: Յեթե  
ես չկատարի գյուղի կոմսոմոլիստը, նրան, գյուղացի-  
ները թաթոսի տեղ կը դնեն, սկի ել չեն հավատա:  
«Սովորել, սովորել ու սովորել», ասել ե կոմսոմոլի Յ-րդ  
համառուսական համագումարում, ընկ. Լենինը յերի-  
տասարդներին: Մեր կոմսոմոլիստները լավ պիտի հաս-  
կանան են խոռքերի նշանակությունը և միշտ սովո-  
րեն ու սովորեն, վորպիսեա տգետ ու անզրագետ մար-  
դը, լավ կոմունիստ չի դառնա և բանվորների գյու-  
ղացիների շահերը չի կարա ալաշտպանի:

Մեր յերկրում շատ անզրագետ մարդիկ կան: Մինչեւ անգամ կոմսոմոլումն ել 3000 անզրագետ կա:  
Անզրագետ մարդը չի կարող խորհրդային իշխանու-  
թյան լավ քաղաքացի լինել Զի կարող իր շահերը հաս-  
կանալ, չի կարող գլուխ հանել այն բոլորից, ինչ կա-  
տարիւմ ե նրա չորս կողմը:

Լենինն ասել ե, վոր զեկրիտով անզրագետու-  
թյունը վերացնել չի կարելի: Ես դժվար գործը, իրեն  
վրա պիտի վերցնի մեր աճող սերունդը, մեր կոմսո-  
մոլը: Մինչեւ վոր յերիտասարդությունը իրեն հատուկ  
վողերությամբ չը սկսի եղ գործը, անզրագետ մար-  
դիկ միշտ ել կը ինեն մեր յերկրում:

Կոմսոմոլը ես աշխատանքը իրա վրա պիտի վեր-  
ցնի, վորպիսի մեր գյուղացիները տեսնեն, վոր կոմ-  
սոմոլիստները ճիշտ ճանապարհի վրա են կանգնած,  
վոր նրանք մեծ գործ են կատարում, բոլորին կարդալ  
գրել են սովորեցնում:

Կոմսոմոլիստը նա ե, ով իր աշխատանքով, հա-

սարակության ոգում և տալիս, աշխատում ե բանվորների ու գյուղացիների համար։ Մեր յերիտասարդության զաստիարակությունը, սովորելը, միշտ կապված պիտի լինի բանվորների և գյուղացիների ընդհանուր աշխատանքի հետ, պիտի կապված լինի են կովի հետ, վորը տանում են բանվորներն ու գյուղացիները բուրժուաների դեմ։ Մենք ուզում ենք աղքատ, բանդված Հայաստանը ծաղկող սոցիալիստական Հայաստան դարձնել։ Դրա համար հարկավոր է, վորպեսզի կոմսոմոլը առաջին ոգնողը լինի, առաջին աշխատողը լինի այդ գործի համար, վորովհետեւ կոմսոմոլիստներն են, վորոնք պիտի գյուղացիների ապահայի համար լավ լուսավոր կյանք ստեղծեն։

Այդպես պիտի դաստիարակվեն և աշխատեն մեր յերկրի յերիտասարդները, վորպեսզի լավ կոմունիստներ դուրս գան։ Այդպես և տաել ընկ. Լենինը, այդպես պիտի մենք անենք։


Մեր գյուղերում շատ յերիտասարդներ կան, վորոնք կոմսոմոլի քիչը մտնելով, կարծում են, թե իրենք ամեն ինչ են գյուղում, կարծում են թե կոմսոմոլը մի կազմակերպություն է, վորը պաշտոններ և բաժանում։ Զարաշար սխալում են նրանք։ Ամեն մի յերիտասարդ, վորը մտնում է կոմսոմոլի շարքերը, պիտի իմանա, վոր նա նոր իրավունքներ չի ստանալու, այլ ընդհակառակը, նրա պարտականությունները շատանալու յեն, վորովհետեւ կոմսոմոլիստ լինել՝ նշանակում է աշխատել բանվորների և գյուղացիների ընդհանուր գործի համար։

Շատ կոմսոմոլիստներ կան, վորոնք գոռոգանում են և վոչվոքի վրա ուշագրություն չեն դարձնում,

կարծում են թե իրենք ամեն ինչի տերն են, ամբողջ աշխարհը և գյուղը իրենցն եւ Լենինը խռովելով թե ինչ աշխատանքներ պիտի տանեն կոմսոմոլիստները, ասել եւ այն, վոր կոմսոմոլիստները չպիտի լինեն յերեակայով վորովհետեւ այդ ժամանակ նրանցից վոչ մեկը լավ մարդ չի դուրս գալու։ Յեթե մի մարդ ջահել հասկում արդեն այդպես սովորեց, վոր միծանա, ավելի վաս կինի։ Դրա համար մեր գյուղի ընկերները թող աշխատեն սովորել, գյուղը լուսավորել ու ծաղկեցնել, բայց յերբեք թող չտան իրենց գոռողանալու։ Ահա թե ինչ և ասել յերիտասարդությանը Լենինը, ահա թե ինչպես պիտի իրենց աշխատանքը կազմակերպեն մեր կոմսոմոլիստները, վորպեսզի կարողանան Լենինի ասածները կյանքի մեջ մտցնել։

Կոմսոմոլի VI-րդ համագումարը Սովորայում, վորը հավաքվել է 1924 թվի հունիս ամսին, ցանկանալով, վոր յերիտասարդները դաստիարակվեն լենինիցմինի (Լենինի ուսմունքի) վորով, վորոշել և կոմյերիտամիությունը վերանվանել լենինյան կոմյերիտմիություն։

Գլխավոր նշանակությունը և իմաստը այդ նոր անվան կայանում է նրանում, վոր կոմսոմոլը զրանով վորոշել եւ իսկապես լուրջ կերպով անցնել այնպիսի աշխատանքների, վորոնք կողնեն իսկական յերիտասարդ լենինյաններ պատրաստելով գործում։ Լենինը չկա, նա մեռել է, բայց կոմսոմոլը վորոշելով անվանել մեր միությունը նրա անունով, վորոշել է 800 հազար կոմսոմոլիստներ, վորոնք պանմամ են Խորհրդային Միության մեջ, առաջանալու մասին կամաց աշխատանքներ, վոր



բոնք կօանքում, իրենց աշխատանքների ժամանակ, կաշխատեն գործեն այնպես, ինչպես լենին և գործեր, ինչպես նաև սովորեցրելով գնալ այն ճանապարհով վորով նաև և գնացել:

Մեր գյուղի կոմսոմոլիստները չպիտի փքվեն, թե կոչվում են մեծ ուսուցչի անունով: Ամեն մի կոմսոմոլիստ լավ պիտի հասկանա մեր միության վերանվանման իմաստը, թեթև աչքով չպետք են նայել դրան և բավականալ միայն միտինգով ու ճառերով: Նոր անունը դնում են ամեն մի կոմսոմոլիստի վրա նոր պարտականություններ:

Մեր գյուղի կոմսոմոլիստները այն ժամանակ կարգացնեն իրենց կազմակերպության նոր անունը, յեթե կարողանան ուսումնասիրել այն գիտությունը, վոր թողել են բանվոր դասակարգին լենինը: Լավ կոմսոմոլիստներ կլինեն այն ժամանակ, յերբ կարողանան այնպես գաստիարակվել, ինչպես ասել են լենինը:

Այն շինարարական-հասարակական աշխատանքը, վոր տանում են մեր գյուղի կոմսոմոլիստները, կապված պիտի լինի քաղաքական դաստիրակչ, աշխատանքների հետ, կառուցելով մեր գյուղը, առուելեր անցկացնելով, նախապարհեներ սինելով, նրանք ջպիտի մոռանան զիրքը յեվ այդ յերկու աշխատանքը իրար հետ կապելով դաստիրական, պատրասվեն: Սա են լենինյան դաստիրակության իմաստը, այսպես պիտի անեն գյուղի մեր բոլոր կոմսոմոլիստները, վորպեսզի բանվորների և գյուղացիների գործը կարողանան առաջ տանել: Շատ թերություններ կան գյուղերում: Խավար են դեռ գյուղը, վորը լուսավորելու համար պիտի պատրաստ-

վի նրա ամենագիտակից յեռանդուն յերիտասարդ մասը՝ կոմյերիտմիությունը:

Այս բոլորը կատարելով միայն մենք կարող ենք ասել վոր իրազործում ենք լենինի ասածները և կառուցում ենք նոր, սոցիալիստական յերկիր, ուր կանքն ավելի լավ են լինելու քան թե եղել են անցյալում, քան թե հիմա յեն:

25 XI 1924 թ. Յերևան

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՏԱՆԵԼ ՔԱՂԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇ- ԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԶԻՋՆԵՐՈՒՄ

Քիչ կոմյերիտական գյուղական բջիջներ կլինեն, վոր իրենց քաղղրադիտական աշխատանքների ղեկավարության համար փորձված, պատրաստված ղեկավարունենան, կուսակցական բջիջից կամ իրենց միջից յելած: Բջիջների մեծ մասը ստիպված պետք է լինեն իրենց սեփական ուժերի վրա դնել իրենց հույսը, հարկադրված պետք և լինեն աշխատելու առանց ղեկավարի ոգնության՝ ինքնուրույն կերպով:

Զբաղբունքների հիմնական ձև պետք և դառնան պարբերական քաղընթերցումները, այսինքն վորոշ ծրագրով ընտրված հանրամատչելի գրքերի և բրոշուրների կոլլեկտիվ ընթերցումը: Այդ քաղընթերցումները բջիջները պետք և կատարեն միասնաբար, իրենց ամբողջ կազմով: Քաղընթերցումների համար շաբաթվամեջ վորոշ որեր պետք և սահմանել:

Այդ զբաղմունքներին մասնակցելը պարտադիր և բջիջի բոլոր անդամների համար: Բացի կոմյերիտականներից, այդ զբաղմունքներին կարող են մասնակցել նաև կուսարջիջի անդամները, գյուղական ուսուցիչները և անկուսակցականները: Բարձրաձայն ընթերցման համար պետք և ընտրել բջիջի ամենազրագետ և ամենաավագ ընթերցող անդամներին, վորոնք հերթով պետք և կարդան զբաղմունքների ժամանակ: Այդ հիմնական

բրքերից զատ, վորոնք պետք և կարդացվեն քաղընթերցման զբաղմունքների ժամանակ, լավ կլինի յեթե բջիջը հանրամատչելի բրոշյուրներ և ղեկարվեստական գրականություն ել ճարի, վորպեսդի բջիջի անդամները երենց տանը կարդան:

Կատարվող ընթերցումը զուտ մեքենայական չէնթըք ել լինի, այսինքն հերթական ընթերցողը չակտոր և կարդա, իսկ մյուսները լուս լսեն: Անհրաժեշտ և ընթերցման ժամանակ ընդմիջումներ անել ընդմիջումների ժամանակ պետք և քննության առնել կարդացածը, պետք և սառավաման առնել արդյոք հասկացել են բոլոր ներկա յեղաները և յեթի չեն հասկացել, պետք և աշխատեն միասին պարզելու հասկանալ չհասկացածը: Այդ ընդմիջումները պետք և ոգտագործեն նաև այլ նպատակներով: Ընդմիջումների ժամանակ կարդացվող զրքի հաղորդած տեղեկությունները պետք և համեմատել տեղական կյանքի հանրածանոթ փաստերի կամ լրացրելի հաղորդած տեղեկությունների հետ:

Սակայն բջիջը չպետք և բավականանա միտոնտական զբաղմունքների ժամանակ բարձրաձայն կարդացած հանրամաշելի գրքերի տվյալ տեղեկություններով ու գիտելիքներով: Քաղկըթության բարձրագույն նպատակներից մեկն ել այն ե, վոր կոմյերիտականը սովորի իր ստացած զիտելիքների ոգնությամբ քննութատորեն վերաբերվել իր բջապատճեն և ճիշտ վորոշել իր անհելիքները:

Այս պատճառով քաղընթերցուցմները պետք և լրացվեն բջիջի անդամներին տրվող գործնական խընդիրներով: Անհատ կոմյերիտականներին (կամ բջիջի մի խումբ անդամների) հանձնարարվում և ծրագրի

Վորեկ և կետի համաձայն, տեղական իրականությունից այդ կետին վերաբերող թվեր և փաստեր հավաքելու ուսումնամասիրեկ համապատասխան որդանների ու կազմակերպությունների աշխատանքը և այլն. այսպես որինակ բջիջի անդամներին կարող են հանձնարարվի, վոր համաձայն ծրագրի յերկորդ կետի, տվյալ վայրի գյուղատնտեսության գրությունը բնորոշող թվական տվյալները հավաքեն կամ յերրորդ հարցի համար ծեր գյուղացիներից տեղեկություններ հավաքեն, թե ինչ գրության մեջ են յեղել գյուղացիները հին կառավարությունների որով, կամ տասնմեկերորդ կետի համաձայն ուսումնամասիրեկ կոռպերատիվ կազմակերպությունների աշխատանքը և այլն. Սակայն այս աշխատանքը կատարելիս կարող են տեղական պայմաններից բղիսող գժվարություններ առաջանալ: Որինակ կարող են պատահել վոր տվյալ շրջանում ամենակին գոյություն չունենան հողանտառ միության բաժիններ, կամ տեղական գյուղացիական կոմիտեն (փոխովկոմը) վոչ մի գործունեյություն ցույց տված չինի, կամ տեղական կոռպերատիվը վաճառելիս լինի պետք վատ ապրանք և ավելի թանգ գներով, քան մասնավոր խանութպանը, այսինքն նա այլևս կոռպերատիվի գործունեյության որինակ չկարողանա ծառայել: Այս պատճառով միայն տեղական իրականությունից լրացուցիչ և թվական տվյալներ հավաքելով չպետք են բավականանալ: Դրա հետ միասին անհրաժեշտ են լայնորեն ոգտագործել լրագրերի տված նյութը: Լրագիրը պետք են քաղցրագիտության զբաղմունքների համար նույնականի ձեռնարկի գեր խաղա վորպիսի գեր խաղում են գրքույկը և տվյալ վայրում հավաքած նյութերը:

Կոմյերիտականներին այս կամ այն հանձնարարությունը տալիս անհրաժեշտ և պահանջելի վորպեսպի նրանք, բացի տեղական իրականությունից նյութեր վերցնելուց և ուսումնամասիրություններ անելուց, ուշադիր կերպով կարդան այս կամ այն լրացրի վերջին համարները («Մաճկալի» վերջին ամսվա և-ը) և տվյալ հարցին վերաբերող լուրերը, հողվածներն ու թղթակցությունները: Որինակի համար վերցնենք տասերորդ գրույցը: Գյուղի շերտավորման մասին բջիջի անդամներին հանձնարարվում և պարզել, թե ինչ տեսակի տնտեսություններ կան գյուղում, քանի գյուղական ցեց կա: Քանի աղքատ գյուղացի, ինչպես ևն հարստանում տեղական գյուղացիները, ինչպես են աշխատում նրանք մտնել հասարակական կազմակերպությունների մեջ, համայնական ժողովների վորոշումներն իրենց ոգտին գարձնել, փորքան և նրանց հաջողվում այդ: Այլ վայրերի գյուղի ցեցերին և նրանց գեմ մղվող պայքարին վերաբերիող նյութեր պետք են քաղել լրագրերից: Այս բոլոր նյութերը բջիջի անդամները՝ ըստ հանձնարարության՝ վոչ թե միայն պետք են հավաքեն, այլ և պետք են կարողանան քննադատորեն վերաբերի նրանց, այսինքն վորոշել հավաքված փաստերի լավ և վատ կողմերը և նրանցից գործնական յեղակացություններ հանել:

Հանձնարարությունները պետք են արվեն նախքան տվյալ հարցին վերաբերի ընթեցումը:

Հավաքած նյութն ամբողջապես պետք են ոգտագործել հերթական զբաղմունքի ժամանակ: Բջիջի անդամները զեկուցում են իրենց հավաքած նյութի մասին և այդ զեկույցի հիման վրա քննության առնվում

այդ որվա զբաղմունքի ժամանակ կարդացված գըր-  
քույլը:

Առանձին հարցերի վերլուծումը և նրանց շուրջը  
բացված մտքերի փոխանակությունը պետք է վորոշ  
յեզրակացությունների բերեն հասարակական կյանքի  
զանագան ասպարեզներում կոմյերիտական բջիջի կա-  
տարած աշխատանքի մասին և այդ յեզրակացու-  
թյունները ապագայում պետք է ոգտագործվեն բջիջի  
կողմից: Այսպես որինակ «Պայքար հանուն լավ բերքի»  
զբույցից հետո պետք է գործնական վորոշումներ հա-  
նել այն մասին, թե ինչպես պետք է կավել տվյալ  
վայրում բերքատվությունը և տնտեսության ար-  
դյունավետությունը բարձրացնելու համար, ինչպես  
պետք է աշխատի յերիտասարդության գյուղատնտե-  
սական խմբակը և այլն: Նույնպես և գյուղի կույլու-  
րական զարգացման մակարդակի բարձրացմանը վե-  
րաբերող զրույցից հետո պետք է յեզրակացություն-  
ներ հանել անդրագիտության վերացման ասպարեզում  
բջիջի կատարելիք աշխատանքի մասին: Որինակի հա-  
մար վերլուծենք այս հարցը: Ինչպես պետք է ընթա-  
նա տասներկույթերորդ զրույցը՝ «Կոռպերացիան  
գյուղում»: Բջիջի անդամներին վաղորոք (մեկ կամ  
յերկու շարաթ առաջ) խնդիրներ են տրվում ուսումնա-  
սիրել տեղական սպառողական խանութի գործունեյու-  
թյունը, նրա ապրունքի վորակը և գները համեմատել  
տեղուկան մասնավոր խանութների ապրունքի վորակի և  
գների հետ, պարզել տվյալ կոռպերատիվի գործունեյու-  
թյան բոլոր թերի կողմերը: Ապա պետք է ուսումնասիրել  
այլ կոռպերատիվ միությունների գործունեյությունը  
և պարզել զրանց ստեղծման անհրաժեշտությունը:

Լրագրներից տեղեկություններ են հավաքվում այն  
մասին, թե ինչպես են գործում կոռպերատիվներն  
այլ վայրերում, ինչպես են արել, վոր այդ վայրերում  
հաջողվել ե եժանացնել ապրանքը, նվազեցնել վերա-  
դիր ծախսերը, վորոշել ապրանքների անհրաժեշտ տե-  
սակները. ինչպիսի կոռպերատիվ ընկերակցություննե-  
րի տեսակներ կան և դրանցից վորն և տեղական  
պայմաններին համապատասխանում, և «կոմյերիտա-  
կանները և կոռպերացիան» բրոցյուրից ոգտվելով պար-  
զել տեղական կոռպերատիվի աշխատանքը լավացնելու  
համար անհրաժեշտ միջոցները և կոմյերիտամիության  
մասնակցությունը կոռպերացիայի աշխատանքնե-  
րին:

Զբաղմունքը վերջացնելուց առաջ, աշխատում  
են պարզել բոլորն ել յուրացըրել են արդյոք զրույցի  
նյութը, ապա տանը կարդալու համար գրքեր են բա-  
ժանվում, պայմանավորվում են հետևյալ զբաղմունքի  
ժամանակի մասին, բաշխվում են անհրաժեշտ հանձնա-  
րարությունները:

Մեծ աշխատանք և ծանրանում ավագի վրա,  
Նրա պարտականությունն և զբաղմունքից շատ առաջ  
կոնսպեկտի միջոցով ծանոթանալ զրույցի բովանդա-  
կությանը, վաղորոք կարդալ այն գիրքը, վոր կար-  
գացվելու յե զբաղմունքի ժամանակ, նշանակել այն  
տեղերը, վորտեղ պետք է ընդմիջել ընթերցումը և  
մտքերի փոխանակություն կատարել, կազմել զբաղ-  
մունքի որվա համար հանձնարելիք խնդիրների  
ցանկը և ինդիքները վաղորոք բաշխել բջիջի ան-  
դամների մեջ, բարձրածայն բնթերցման ժամանակ  
հետևել կարգապահությանը, գրքեր ճարել և բա-

ժանել թջիջի անդամներին։ Այս պատճառով ավագ պետք ե ընտրել ամենագրագետ և ամենայեռանդուն կոմյերիտականներին (կարելի յե ընտրել թջիջի քարտուղարին)։ Կարելի յե ընտրել նաև ավագին ոգնականներ և նրանց վրա դնել պարտականությունների վորոշ մասը։ Ավագը պետք ե կենդանի կապ պահպանի շրջաբանագչի և գավառական կոմիտեյի ագիտպրոպլ բաժնի հետ։

Զբաղմունքների աջողությունը կախված է նրանից, թե խմբակին վորքան կնաջողվի ուղիղ հիմքերի վրա դնել զբաղմունքների գործը, չխախտել կարգապահությունը, խմբակի անդամների մեջ ակտիվությունը զարգացնել դեպի պարագամունքները։

Պետք ե աշխատել, վոր զբաղմունքները պարբերական ու կանոնավոր լինեն, սկսվեն նշանակած ժամերին, բոլոր անդամները ճշտությամբ կատարեն տըրգած հանձնարարությունները։ Բջիջի ամեն մի անդամի համար քաղզրագիտության զբաղմունքներին մասնակցելը պետք ե նրա կոմյերիտական պարտականություններից մեկի կատարումն համարվի։

Զբաղմունքների ժամանակ պետք ե կռվել մի բավական տարածված յերկույթի դեմ, կոմյերիտականների մի մասը վոչ մի մասնակցություն չի ցույց տալիս աշխատանքներին, մեծ մասամբ լռում ե. պետք ե զբաղմունքին մասնակից դարձնել թջիջի բոլոր անդամներին թջիջի մյուս անդամներին հավասար, նրանց ևս հանձնարարություններ տալով և զբաղմունքների ժամանակ հարցերի միջոցով ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴՐՈՒՅԹԻ կենդանի հերաքրքրություն դարձենենք։



